Հաստատվում է
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր Բ. Մ. Մակիչյան
27 մայիսի 2014 թ.

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի 2014թ. մայիսի
27-ի որոշմամբ (արձ. № 9)

Անվճար ուսուցման, անվանական կրթաթոշակների և սովորողների ուսման վարձի նվազեցման (զեղչերի) մասին համալսարանում սահմանված կարգերում կատարել լրացումներ ու փոփոխություններ և վերջնական խմբագրությամբ ուժի մեջ դնել Հյուսիսային համալսարանում սահմանված անվճար ուսուցման, անվանական կրթաթոշակների և ուսման վարձերի զեղչման միասնական կարգը

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ, ԱՆՎԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՅԼ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգով սահմանվում է Հյուսիսային համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) սովորողների անվճար ուսուցման կազմակերպման, ուսման վարձի զեղչման, անվանական և հատուկ այլ կրթաթոշակների նշանակման կարգը և հիմքերը.

1.2 Սույն կանոնակարգը կիրառվում է Համալսարանում, Համալսարանի մասնաճյուղերում, առանձին դեպարտամենտներում, Համալսարանի գտնվելու վայրում և դրանից դուրս գտնվող Համալսարանի ստորաբաժանումներում սովորողների նկատմամբ:

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1 Համալսարանում անվճար ուսուցմամբ սովորում են միասնական ընդունելության քննությունների արդյունքով մրցութային կարգով 3 քննություններից առնվազն 52 միավոր հավաքած այն դիմորդները, որոնք կդիմեն Համալսարանի անվճար համակարգ 1-ին կամ 2-րդ հայտով.

2.2 Սովորողի անվճար կրթության իրավունքը երկրորդ կուրսում պահպանվում է, եթե 1-ին կուրսում ցուցաբերել է ամենաբարձր ուսման առաջադիմություն (երբ միջին որակական գնահատականը (այսուհետ՝ ՄՈԳ) կազմում է առնվազն 95 միավոր), և 2012

թվականից հետո Սիրիայից ներգաղթած հայերը:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՎՈՂ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

3.1. Համալսարանում ուսման վարձի 20 տոկոս զեղչման իրավունքից օգտվում են հետևյալ անձինք.

ա/ Բանակից զորացրվածները նույն տարում Համալսարան ընդունվելիս առաջին կուրսում: Հաջորդ ուսումնական տարում (կուրսերում (մինչև ավարտական կուրսում)) նշված զեղչի իրավունքից օգտվում է, եթե նախորդ կուրսում ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70 միավոր).

բ/ Միևնույն ընտանիքից միաժամանակ սովորող երկրորդ (երրորդ) երեխաները առաջին կուրսում): Հաջորդ ուսումնական տարում (մինչև ավարտական կուրսում) նշված զեղչի իրավունքից օգտվում է (են), եթե նախորդ ուսումնական տարում ցուցաբերել է (են) ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70 միավոր).

գ/ Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ առաջին կուրսում: Հաջորդ կուրսում (կուրսերում (մինչև ավարտական կուրսում)) նշված զեղչի իրավունքից օգտվում է, եթե նախորդ կուրսում ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70 միավոր),

դ/ Համալսարանի առաջին կուրսում՝ համալսարանի ավագ դպրոց-վարժարանի աշակերտները:

3.2 Համալսարանում ուսման վարձի 30 տոկոս զեղչման իրավունքից օգտվում են հետևյալ անձինք.

ա/ Համալսարանի մասնաճյուղերից առկա ուսուցմամբ հարկադրաբար Երևան տեղափոխված սովորողները.

բ/ Սիրիահայերը երկրորդ և երրորդ կուրսում (կուրսերում), եթե նախորդ ուսումնական տարվա (տարիների) ընթացքում ցուցաբերել են բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70-79 միավոր):

3.3 Համալսարանում ուսման վարձի 50 տոկոս զեղչման իրավունքից օգտվում են հետևյալ անձինք.

ա/ Միաժամանակ երկրորդ մասնագիտությամբ սովորողը առաջին կուրսում: Հաջորդ կուրսում (կուրսերում (մինչև ավարտական կուրսում)) նշված զեղչի իրավունքից

օգտվում է, եթե նախորդ կուրսում ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 90 միավոր).

բ/ Զոհված ազատամարտիկների չամուսնացած երեխաները ուսումնառության ողջ ընթացքում.

գ/ Երկկողմանի ծնողազուրկ երեխաները ուսումնառության ողջ ընթացքում.

դ/ Սիրիահայերը՝ երկրորդ և երրորդ կուրսում (կուրսերում), եթե նախորդ ուսումնական տարվա (տարիների) ընթացքում ցուցաբերել է բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 80-89 միավոր):

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԸ

4.1 Համալսարանում սահմանված են հետևյալ անվանական կրթաթոշակները.

ա/ «Վիկտոր Համբարձումյան»՝ մրցութային կարգով շնորհվում է առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և գիտահետազոտական աշխատանքի ակնհայտ հակում դրսևորած սովորողին՝ նախապատվություն տալով համալսարանի բարձր տեխնոլոգիաների ֆակուլտետի համապատասխան սովորողի.

բ/ «Հովհաննես Թումանյան»՝ 2 կրթաթոշակ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի հումանիտար ֆակուլտետների, ինչպես նաև Ալավերդու «Թումանյան» բաժանմունքի առնվազն 4 կիսամյակ անընդմեջ գերազանցիկ և հասարակական աշխատանքներում աչքի ընկած սովորողի.

գ/ «Նիկոյայ Ռիժկով»՝ 2 կրթաթոշակ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի իրավագիտության կամ տնտեսագիտության ֆակուլտետի առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և օրինակել վարքագիծ դրսևորած սովորողի.

դ/ «Վազգեն Սարգսյան»՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության բանակում ծառայությունը հաջողությամբ ավարտած սովորողի.

ե/ «Կամո Ուղումյան» մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի հումանիտար ֆակուլտետներից որևէ մեկի առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և օրինակելի վարքագիխծ դրսևորած սովորողի.

զ/ «Հյուսիսափայլ»՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի լրագրության ֆակուլտետի՝ առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և ստեղծագործական աշխատանքներում հաջողություններ ունեցող սովորողի.

է/ «Աշոտ Փարեմուզյան»՝ 2 կրթաթոշակ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի մանկավարժության, հայոց լեզվի և գրականության կամ օտար լեզուների ֆակուլտետների՝ առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և ակտիվ հասարակական աշխատանք կատարող սովորողի.

ը/ «Ուսման նվիրյալ»՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի Արթիկի բաժանմունքի՝ առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և օրինակելի վարքագիծ դրսևորած և հասարակական աշխատանքներում աչքի ընկած սովորողի.

թ/ «XXI դարի մասնագետ»՝ մրցութային կարգով մեկ տարի ժամկետով շնորհվում է Համալսարանի «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի հաղթողին.

4.2 Համալսարանի ռեկտորատի որոշմամբ կարող են սահմանվել այլ անվանական կրթաթոշակներ:

5. ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

5.1. Համալսարանում հատուկ կրթաթոշակներ ստանալու իրավունքից օգտվում են.

ա/ Համալսարանի քոլեջը (այսուհետ Քոլեջ) կարմիր դիպլոմով ավարտած շրջանավարտները համալսարան ընդունվելու դեպքում առաջին կուրսում օգտվում են կրթաթոշակ ստանալու իրավունքից.

բ/ Քոլեջը գերազանց այլ առաջադիմությամբ (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 90 միավոր) համալսարան ընդունվելիս համալսարանի գիտխորհրդի որոշմամբ հատուկ կրթաթոշակ ստանալու իրավունքից կարող են օգտվել նաև հաջորդ կուրսերում:

5.2. Հատուկ կրթաթոշակների տեսակն ու չափը սահմանվում է Համալսարանի ռեկտորատի որոշմամբ:

5.3. Համալսարանի ռեկտորատի առաջարկությամբ և Համալսարանի ռեկտորի համաձայնությամբ կարող են սահմանվել այլ հատուկ կրթաթոշակներ:

5.4. Սույն կարգը ուժի մեջ է մտնում 2014թ թվականի սեպտեմբերի 1-ից:

6. Սույն կանոնակարգի 2.1-3.3 կետերի դրույթները չեն տարածվում 2020-2021 ուստարում և դրանից հետո համալսարան ընդունված, տեղափոխված կամ ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողների վրա **(6-րդ կետը լրացվել է գիտական խորհրդի 2020 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ):**